ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

Լ. Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Արփիար Արփիարյանը դրական-հասարակական ասպարեզ է մտել իբրև հրապարակախոս։ Նրա առաջին հոդվածը լույս է տեսել 1877 թ. Պոլսի «Մասիս» շաբաթաթերթում՝ «Մուրատյան վարժարան» վերնագրով։ Ինչ-ինչ պատճառներով այն մինչ այժմ դուրս է մնացել ուսումնասիրողների տեսադաշտից և դրա հետևանքով նրա հրապարակախոսական գործունեության սկիզբը համարվել է 1878 թ., երբ նա սկսել է թղթակցել «Մշակին»։ Այնինչ հրապարակախոսի անդրանիկ հոդվածն արդեն հատկանշվում է ըմբռնումների հասուն որոշակիությամբ և ծրագրային ուղղվածությամբ։

Առաջնային և ելակետային հարցը, որին վճռական գործոնի դեր էր հատկացնում Արփիարյանը, ազգի միասնական գիտակցության կոման, ուժերի համախմբման պահանջն էր։

Այդ հրատապ կարևորության հարցը բարձրացնելով Մուրատ-Ռափայելյան դպրոցի գործունեության առիթով, «Մասիսը» տեղին է գտնում իր ընթերցողների ուշադրությանը ներկայացնել «Վենետիկում ուսում առած հայ պատանու խորհրդածությունը»։ «Խորհրդածությունն» իսկապես ուշագրավ է արծարծվող հարցերի հասարակական ուղղվածության և քաղաքացիական դիրքորոշման ընդգծված բովանդակությամբ։ Շարադրելով իր տեսակետները, հեղինակը բանաձևում է ազգության, կրոնի, կրթության մասին ժամանակի պահանջներից ելնող գրույթներ։ Կրթությունն ու կրոնը կոչված են նպաստելու ազգության պահպանության գործին և պետք է ծառայեն այդ հիմնական նպատակին։ Ազգության հասկացությունը ընկալվում է հայրենիքի ապաղայի լայն ըմբռնմամբ, որի հիմքում է դրվում միասնական գիտակցության համախմբող անհրաժեշտությունը։ «Մեք ազգության վրա մի մեծ գաղափար ունիմք և Հայ անունը կրոնական դավանության մը պաշտպանությանը չեմք հանձներ։ Լուսավորչական, Հռովմեադավան, բողոքական Հայք միշտ հայ են և իրարու եղբարք, թեև այս սկզբունքն ավելի փիլիսոփայական է, քան թե բաղաքագիտական։ Ընդհանուր համոզում մը գոյացած է, թե մեր վիճակն ունեցող ազգի մը հարկ է մի կրոնական դրոշ և եթ ունենալ, այն դրոշն, որ զարերև հետև մեր հայրենի երջանկությանն ու աղետից վկան է»[1]։ Արփիարյանը պարտադիր է համարում հարգել մարդու խղճի ազատությունը և հենց այդ «աղատամտական ըմբռնմամբ» էլ չբռնանալ անհատի իրավունքներին։ Քաջատեղյակ լինելով Մխիթարյան դպրոցի ընդունելության կարգին, նա ցավով է նշում այն փաստը, որ աշակերտների գերակշռող մասը այնուամենայնիվ կաթոլիկներից են, այնինչ, ըստ Արփիարյանի, հենց այդ դպրոցն է, որ սոլորեցնում է «գրասեղաններու վրա մեկ տեղ նստելով... ազգության մեկ անունի տակ դիրար սիրել»։ Բարձր գնահատելով Մխիթարյան հայրերի, և ամենից առաջ Ղեոնդ Ալիշանի գործունեությունն ու ջանքերը, որոնք օտար հողի վրա շարունակում էին պահել ազգության ոգին, հայրենիքի սուրբ գաղափարը, Արփիարյանը մասնավոր առաջարկներով փորձում է նպաստել կարևոր հասարակական խնդրի՝ ազգության համախմբման լուծմանը։

Խորաթափանց դիտողականությամբ և արդիականության սուր զգացողությամբ էին հատկանշվում Արփիարյանի թղթակցությունները «Մշակին», որոնք Թիֆլիս հասան անձնական նամակների ձևով, գրավելով Գրիգոր Արծրունու ուշադրությունը, և վերջինս չհապաղեց հրատարակել դրանք։

---

1 «Մասիս», 1877, № 2007։

«Մշակի» 1878 թ. փետրվարի 22-ի համարից սկսվում է Արփիարյանի թղթակցությունը թերթին՝ բեկումնային նշանակություն ունենալով նրա կյանքում։

Անշուշտ, պարզ զուգադիպությամբ չէր, որ հենց այդ օրերին Գրիգոր Արծրունին «Մշակի» էջերում հրապարակում է Արփիարյանի նամակները։ Հայությունն ապրում էր ազատագրության հույսերի աննախընթաց վերելքի ժամանակներ։ Ինքնաքննության, ազգային կացության ճշգրիտ ճանաչողության պահանջը առաջնահերթ բովանդակություն է ձեռք բերում քաղաքական ճիշտ դիրքորոշման, ուժերի գնահատման նկատառումներով։ Գալիք իրադարձություններին համակողմանի պատրաստվելու ծրագրերում դժվար է գերագնահատել Արծրունու եռանդուն ջանքերը համազգային ոգորումները կազմակերպելու ուղղությամբ։ «Մշակը» դառնում է գաղափարական այն կենտրոնը, որի շուրջը համախմբվում ու գործնական առաջադրությունների ուղին են բռնում ազատագրական շարժման ամենաազդեցիկ դեմքերը։

Հայկակ-Արփիարյանի թղթակցությունները Պոլսից ոչ միայն համահնչուն էին «Մշակի» խմբագրության գաղափարական ընթացքին, այլև դալիս էին մեծապես նպաստելու խմբագրի և նրա համախոհների ծրագրերի իրականացմանը։ Հետագայում արժեքավորելով 1870—80-ական թթ. «Մշակի» հասարակական նշանակությունը, Լեոն թերթի հեղինակության կտրուկ աճը բացատրում է Արծրունու, Բաֆֆու և Արփիարյանի համագործակցությամբ։ Մասնավորապես անդրադառնալով Արփիարյանի դերին, նա նշում է «Մշակի» համար այն չափազանց կարևոր իրողությունը, որ «1878-ից նրա էջերում սկսեց մեծ տեղ բռնել, հետզհետե հարստանալ, զարգանալ թուրքահայերին վերաբերող բաժինը։ Կ. Պոլսից ահագին ինքնուրույն նյութ էր ուղարկվում Արծրունուն։ Հայկակի պես անխոնջ, լավատեղյակ տաղանդավոր թղթակից երբեք ոչ մի հայ թերթ չէ ունեցել»։ Արծրունուց, Բաֆֆուց հետո Լեոն Արփիարյանին համարում է «երրորդ խոշոր ուժը, որի վրա հիմնվում էր «Մշակի» հեղինակությունը, ժողովրդականությունը, անշուշտ Հայկակն էր իր մանրամասն, միշտ հետաքրքրական, միշտ գրավիչ թղթակցություններով, որոնց մեջ ընդարձակ լուսաբանության էին ենթարկվում Կ. Պոլսի և առհասարակ թուրքահայերի բոլոր փոքր ի շատե աչքի ընկնող գործերը»[2]։

Իր առաջին իսկ թղթակցություններում Հայկակ-Արփիարյանը ձգտում էր պարզություն մտցնել արևմտահայ հասարակական մտայնության, կատարվող իրադարձությունների բովանդակության ու շարժառիթների մասին։ Թղթակիցն անհրաժեշտ և կարևոր է դիտում ընդգծել ամենից առաջ հայության ռուսական կողմնորոշման խնդիրը։ Արտահայտելով արևմտահայ առաջադեմ շրջանների դիրքորոշումը, նա գրում էր. «Այժմ մեր տեսության գլխավոր առարկաներեն մին եղած է Ռուսիայի քաղաքականությունը, և մենք շրջահայեցությամբ կուզենք օգուտ քաղել պատահաններեն... Ինչ որ կարող ենք անել, այդ պետք է որ պահանջենք և անենք և ոչ թե անկարելի բաներու ձգտելով, կարելին ալ վտանգի ենթարկենք։

Թե Թուրքիայի քրիստոնյաները որչափ պետք է գնահատեն այժմ Ռուսիայի պաշտպանությունը և խնդրեն զայն, այդ մասին մենք չենք խոսիր, որովհետև արդեն եղելությունները կխոսին։ Մենք ավելի հույս ունենք Ռուսիայի, քան թե այլ տերության պաշտպանության վրա»[3]։

Արփիարյանի թղթակցություններում ըստ ամենայնի բացահայտվում են արևմտահայ հասարակական խավերի դիմադիր տեսակետները Հայկական հարցի դիվանագիտական նախագծերի մասին։ Հայերի ինքնավարության և պետականության վերականգնման հույսերը ի դերև ելան մեծ տերությունների և ամենից առաջ անգլիական քաղաքագետների ջանքերով։ Սակայն հայ ազգային ոլորտներում բոլորը չէ, որ ըմբռնում էին միջազգային դիվանագիտության ընթացքի բոլոր ծանր հետևանքները։ Հասարակական այդ մտայ-

2 Լ ե ո. Գրիգոր Արծրունի. հ. 3, Թիֆլիս, 1905, էջ 95—96.
3 «Մշակ», 1878, № 42։

նությունն էլ հույսեր էր փայփայում Անգլիայի հովանավորությամբ հասնելու Հայկական հարցի դիվանագիտական լուծմանը։

Այլ տեսակետ էր պաշտպանում Արփիարյանը։ Իր թղթակցություններում նա բացահայտում է անգլիական կառավարող շրջանների գաղութատիրական քաղաքականության բովանդակությունը։ Իբրև ապացույց է բերվում լորդ Բիկոնսֆիլդի ելույթը, ուր անգլիական քաղաքագետն անհրաժեշտ է գտնում հայ գավառները դարձնել զինվորական ամրություններ՝ կենտրոնացնելով այնտեղ թուրքական բանակը։ «Պիքոնսֆիլդի այդ խոսքերը,— գրում է Հայկակը,— ակներև կցցնեն թե Հայաստան ամուր բերդերով ամրացնել, թրքական բանակ մը հոն պահել այս պիտի ըլլա Հայաստանի մեջ Անգլիո քաղաքականության ուղղությունը։ Եվ սակայն, երբ մեր հայրենիքը մշտնջենավոր բանակատեղի մը ըլլա, ո՞ւր կմնան այն ժամանակ մեր ապագա ինքնօրինության հույսերն»[4]։

Բիկոնսֆիլդի ճառն, ըստ Արփիարյանի, մի դրական նշանակություն կարող է ունենալ, այն է՝ «անգղիասեր հայոց աչքերն կբանա», ցույց տալով այդ քաղաքականության «սխալ և վտանգավոր ճանապարհը»։ Հրապարակախոսի եզրակացությունը մեկն է. «Ալ մենք որոշեցինք. Անգղիո պաշտպանությամբ և թրքաց ձեռոք բարեկարգություն հուսալն մի utopie է»[5]։

Ազգային-ազատագրական շարժման աննահանջ ընթացքի ապացույց դիտելով ժողովրդական ընդվզումները, Արփիարյանը իր հոդվածներում կոչ է անում ամեն միջոցներով սատարել անհավասար մարտի ելած ապստամբներին, չթողնել միայնակ մահու և կենաց պայքար մղող ղեյթունցիներին։ «Հարկավոր միջոցների» շարքում հրապարակախոսը կարևոր տեղ էր տալիս արևմտահայ և արևելահայ հասարակական շրջանների միասնական գործունեությանը։ Նրա կոչերը լայն ընդունելություն են գտնում արևելահայության մեջ։

1880-ական թթ. սկզբին Հայկակի թղթակցությունները լի են Պոլսում և գավառներում ուժգնացող ազգային ճնշման բազմաթիվ օրինակներով։ Թղթակցի անդրադարձությունները ոչ միայն ըստ ամենայնի ցուցադրում են հայության օրեցօր վատթարացող դրությունը, այլև բացահայտում սուլթանական Թուրքիայի քաղաքականության ընթացքը՝ սոցիալական, բարոյական բռնություններից մինչև ֆիզիկական բնաջնջման վերջնական ծրագրի իրականացումը։ «Երկաթե ձեռք մը կծանրանա Կ. Պոլսո մամուլին վրա»[6],— գրում է Արփիարյանը։ Նա բերում է փաստեր հայկական ներկայացումների, հայոց պատմության, նույնիսկ օրացույցների հրատարակության արգելման մասին։ Միաժամանակ ցույց է տրվում նաև, որ հալածանքի այդ քաղաքականության ջղաձիգ դիմադրությունը չի կարող խեղդել ազգային ազատագրական շարժման բարձրացող ալիքը։

Դժվար է գերագնահատել «Մշակում» Արփիարյան-Հայկակի հրապարակախոսության պատմական դերն ու նշանակությունը. Շուրջ երեսուն տարիների համարյա անընդմեջ շարունակվող թղթակցություններով կենդանի կապ դառնալով արևմտահայ և արևելահայ հատվածների միջև ազգային նպատակի իրագործման ուղիներում, հրապարակախոսն աննախադեպ հետևողականությամբ հանդիսացավ արևմտահայության ազատագրական ոգորումների ու իղձերի թարգմանը։ Շնորհիվ Արփիարյանի օբյեկտիվ վերլուծությունների. արևմտահայ կյանքը արևելահայության առջև հառնում էր իբրև ապրող իրողություն՝ իր բազմաշերտ տարածքով, տեղաշարժերի, առաջադրվող անհետաձգելի խնդիրների բարդ ընթացքով։ Այդ թղթակցությունները կարևոր հիմք են դառնում «Մշակի» և նրա խմբագրի հասարակական վերաշինության ծրագրերում՝ իբրև ազգային համախմբման, ազատագրական պայքարի իրագործումների կայուն երաշխիք։ Մշա-

4 Նույն տեղում, № 202։

5 Նույն տեղում, № 176,

6 «Մշակ», 1881, № 15։

կականների շատ համոզումներ ու պատկերացումներ ճշտվում ու ստուգության են ենթարկվում Արփիարյանի կողմնորոշող հոդվածների շնորհիվ։

Աստանդական կյանքը տարիների ընթացքում փոխել է հրապարակախոսի թղթակցությունների հասցեները։ Պոլսին հաջորդել են Լոնդոնը, Վենետիկը, Կահիրեն, Ալեքսանդրիան[7]։ Հայկական տարբեր գաղթավայրերից եկող հոդվածները շարունակել են լուսաբանել ազգային կյանքի նոր պայմաններն ու առանձնահատկությունները՝ նպատակամիտելով նպաստել ազգապահպանության գործին։ Գաղթօջախների հասարակական-մշակութային կյանքի լուսաբանությամբ հրապարակախոսը ձգտել է հայ հավաքականության համախմբմանը՝ իբրև վերջնական նպատակակետ ունենալով հայության ազատագրության բաղձալի հեռանկարը։

Աշխատակցությունը «Մշակին» կարևոր էր նաև Արփիարյան-խմբագրի գործունեության առումով։ «Մշակի» գաղափարական մթնոլորտը կազմակերպում և ուղղություն է տալիս հրապարակախոսի սկզբունքներին, մշակում դրանք իբրև մասնագիտական կողմնորոշում՝ Պոլսում հիմնադրելու և վարելու ժամանակի մամուլի այնպիսի կարևոր օջախներ, որպիսիք դարձան «Արևելքը», «Մասիսը», «Հայրենիքը»։

* * *

1884 թ. հունվարի 2-ին լույս է տեսնում «Արևելք» օրաթերթի առաջին համարը, որը նախապատրաստվել և պայմանավորվել էր ոչ միայն Արփիարյան-հրապարակագրի անձնական մղումներով, այլև ժամանակի հասարակական-քաղաքական իրադրության թելադրանքով։ Պոլսում ունենալ թերթ, որ իր ուղղությամբ համապատասխաներ հանրության նորօրյա պահանջներին, դառնար խոսափող մեծամասնության մեջ խորացող դեմոկրատական գաղափարների արտահայտման համար, նպատակաուղղեր ժողովրդի գիտակցությունը՝ գաղափարական ծրագրի այս ուղեգծով էր առաջնորդվում Արփիարյանը՝ ձեռնամուխ լինելով նոր թերթի հրատարակման դժվարին գործին։ Տարիներ անց, հրապարակագիրն իր հուշերում խոստովանում է, որ ձեռնարկի ողջ բարդությունը նա հստակ գիտակցել է. «Հանրության համար գրողներու կարգին մեջ մտնելու համար պետք էր մոռնալ անձնական հաճույք ու տհաճություն, հրապարակագիրը խնամակալ մըն է, որ իր անձին համար չի մտածեր, այլ ուրիշին»[8]։ Այս համողմամբ էլ նա մուտք է գործում արևմտահայ լրագրության ասպարեզ՝ այլևս չհեռանալու համար, իր անանձնական կյանքի գերագույն նպատակն ու բովանդակությունը դարձնելով գրող-հրապարակախոսի անխոնջ գործունեությունը։

«Արևելքի» հիմնադրությամբ արևմտահայ հրապարակախոսություն է մտնում 80-ականների սերունդը՝ հասարակական գիտակցության վերակառուցման, գաղափարների արմատական բեկման պարտականությամբ, խանդավառ հավատի խրախույսով։

Թերթի սկզբնավորությունն ու նրա շարունակական նշանակությունն արժեքավորելով Գրիգոր Զոհրապը գրել է. «Պոլսո նոր լրագրությունը Արեվելքով կսկսի. ավելի շատ իմաստասիրություն հանրային խնդիրներու, ավելի մոտ տեղեկություն եվրոպական աղգերուն վրա, անհատական դձուձ խնդիրներն ու վեճերը՝ տեղի տալով ընդհանուր տեսություններու. հայ լեզուն, այս կամ այն խմբագրապետի գծած անձուկ սահմանները կոխոտելով, վերստացած իր ժողովրդյան բարբառի անկախությունը, խմբագրությունը՝ դադրելով արհեստ մը լինելե, արվեստ դառնալու համար. գրական նոր սեռեր՝ գրական նոր մարգերու ձեռքով, ամենքը միևնույն անփոփոխ նպաստ-

---

[7] Տարագրության ընթացքում «Մշակին» ուղարկված հոդվածները կրում են «Հայ կյանքեն» խորագիրը, երբ աստղ՝ *** ստորագրությամբ։

[8] «Հայրենիք», 1894, № 938։

կին կապված՝ հասարակության պետքերուն ըմբռնումը։ Ահավասիկ նոր լրագրություններ»։

Որքան էլ հասունացած էր հասարակական գիտակցության տեղաշարժերի անհրաժեշտությունը, նույնքան կայուն էր պահպանողական մբռնումների ինքնությունը, որի դրսևորումներին մարտահրավեր է նետում «Արևելք» ազգային կյանքի տարբեր ոլորտներում։ Թերթի բովանդակությունը թելադրում էր պահպանողական գաղափարաբանության դեմ ուղղված ռադիկալ-գործնական տրամաբանության ընթացք, որը գլխավորապես պայմանավորված էր Արփիարյանի դեմոկրատական հայեցությամբ։ 80-ականների շարժման և նրա հիմնադիր-գաղափարախոս Արփիարյանի նոր դիրքորոշումը դրսևորում էր շեշտված քննադատական վերաբերմունք եկեղեցու և ազգային իշխանությունների դասային հեգեմոնիայի դեմ։ Բուրժուական լիբերալիզմի հակասականությունը հրապարակախոսը հաստատում է հասարակության տարբեր շերտերի, ազգային կյանքի ղեկավարման ոլորտների խորագնին ուսումնասիրությամբ։ Ազգային ինքնորոշման ձգտող դեմոկրատական հոսանքը իր պայքարում քննադատության սլաքն առաջին հերթին ուղղում է գաղափարական կոնֆորմիզմի արտահայտությունների դեմ։ Քննադատության սոցիալական բնույթի դրսևորումները զուգակցվում են քաղաքական դիրքորոշման նպատակամիտվածությամբ՝ ներկայացնելով բաղաքացիական շեշտված նկարագրի ամբողջականությունը։

Հետևելով Արփիարյանի հրապարակախոսական գործունեությանը «Արեւելքիս էջերում, կարելի է որոշակի պատկերացում կազմել նրա գաղափարական-ծրագրային ուղեղումների նախապատրաստվող ընթացքի մասին։ Թեև իր վերհիշումներում հրապարակախոսը «Արևելքի» սկզբնավորման շրջանը բնութագրում է որոնումների, իր իսկական դեմքը գտնելու անորոշության վիճակով, սակայն, որքան էլ իրոք պակասում էր փորձառությունը և սակա էին ժամանակի անբարենպաստ հանգամանքները, թերթին հաջողվում է ձևոր բերել ուրույն նկարագիր և ինչպես նշում է հետագայում Արփիարյանը՝ «շուտ տեսանք, թե մեր պատրաստած թերթը ախորժելի եղավ հանրության ու հինավուրց Մասիս ջանքեր ըրավ, որ ճիշտ Արևելքի հետևի»[10]։ Սակայն չնայած «Մասիսի» հրատարակիչների ջանքերին, թերթի հետագա գոյությունը պահպանելու միակ միջոցն է դիտվում նրա միացումը «Արևելքի» վարչությանը։ «Մասիսի» խմբագրությունը 1884 թ. սեպտեմբերից ստանձնում է Արփիարյանը՝ միաժամանակ շարունակելով աշխատակցել «Արևելքին»։ Երկու պարբերականների գաղափարական միասնական ընթացքը հրապարակախոսի կայուն համոզումների գործնական վրկայությունն էր։ «Արևելք»-«Մասիս» կանխաշեմներում առաջնային նշանակություն է վերապահվում համազգային միասնության ծրագրային լուծումներին։ Արևմտահայ և արևելահայ հատվածների մերձեցման ու փոխադարձ ճանաչողության պահանջները ինչպես «Մշակի» թղթակցություններում, այնպես էլ «Արևելք»-«Մասիս» էջերում արծարծվում են լայնորեն՝ ընդգրկելով հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտներ։ Միջավայրը և արտաքին քաղաքական անբարենպաստ հանգամանքները պայմանավորում են դրականության՝ հասարակական գործոնի աճող դերը։ Այդ նպատակի իրագործման առաջին փորձերից մեկն է դառնում Բաֆֆու վեպերի տպագրությունը «Արևելքի» էջերում[11]։ Դրան նախորդել էր «Բաֆֆի և հայ վիպասանությունը» հոդվածաշարը[12], որի լայն արձագանք-

9 Գր. Զոհրապ. Երկերի ժողովածու երկու հատորով. հ. 2, Երևան. 1962, էջ 317։

10 «Հայրենիք», 1893, № 670։

11 1884 թ. «Արևելքիս» 24—155 համարներում տպագրվում է «Խաչագողի հիշատակարանը», այնուհետև համառոտարար ներկայացվում է «Խամսայի մելիքությունները»։ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Բաֆֆի և Արփիար Արփիարյան.—«Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 3։

12 Տե՛ս «Մասիս», 1884, ՀՀ 3734, 3736, 3737, 3739։

ները հրապարակախոսի համար պարզ էին դարձրել մտահղացման անհրաժեշտությունն ու արգասավոր արդյունքը։ Օգտագործելով տարբեր առիթներ, արևմտահայ ընթերցողին է ներկայացվում Գր. Արծրունու, Գ. Սունդուկյանի, Գ. Զմշկյանի, Լեոյի, Արգար Հովհաննիսյանի և ուրիշների գործունեությունը։

1884 թ. ապրիլին Կովկաս կատարած ուղևորության հարուստ տպավորությունները Արփիարյանն ամփոփում է «Ուղևորություն ի Կովկասիս», «Ուղևորություն յԱրևելս» և «Կովկասյան ճանապարհորդություն» թղթակցությունների շարքում։ Արփիարյանի ուղևորության առիթը կաթողիկոսական ընտրություններն էին, սակայն և՛ հրապարակախոսն ինքը, և՛ նրա համախոհներն «Արևելքի» խմբագրությունում շատ ավելի լայն նպատակներ էին հետապնդում։ «Կովկաս գնալուս մեջ,— գրում է նա,— մեր խմբագրության փափագներեն մին էր, որ ի մոտո լավ տեղեկություններ ստանամ ո՛չ միայն Ռուսահայոց գործերու մասին, այլ նաև գիտնամ թե՝ ինչ են իրենց համոզումներն մեր խնդրոց մասին, միանգամայն նոցա կարծիքն Թուրքիո Հայոց զանազան անձնավորությանց վրա։ Ես այս տեղեկությունները քաղեցի որչափ որ կարող էի, և որչափ որ պետք ունինք»[13]։

Արևելահայության մեջ արդեն հայտնի անուն լինելով «Մշակի» իր թղթակցություններով, Արփիարյան-Հայկակը Կովկասում գտնում է ջերմ ընդունելություն։ Նրա այցելության հեռանկարային նպատակների հետ մեծ հույսեր էին կապում արևելահայ գործիչները՝ ժողովրդի ազատագրական պայքարի ուղիների հետագա ծրագրերը մշակելու գործում։ Հայտնի պատճառները թույլ չեն տալիս «Արևելքի» թղթակցություններում բացահայտորեն խոսել այդ մասին և նա բավարարվել է նշելով, թե «պետք էր նախ գործս տեսնել և գործիչների հետ հարաբերություն ունենալ»[14]։

Արփիարյանի կովկասյան ուղևորության գործնական արդյունքները շատ շուտով ի հայտ են գալիս նրա հրապարակախոսական և հասարակական գործունեության ոլորտներում։ «Մասիսը» իր շուրջն է համախմբում նոր, երիտասարդ ուժեր, որոնց ստեղծագործական որոնումներին ու մղումներին ուղղություն են տալիս խմբագրի ծրագրային կանխագծումները։

Արփիարյանի «Օրվան կյանքը» քրոնիկները, «Ազգային տեսություն», «Բանասիրական» բաժինները, Հ. Ասատուրի, Լ. Բաշալյանի, Գր. Զոհրապի հոդվածները, դիմանկարային շարքերը, գեղարվեստական գործերի հետ նոր սերնդի գործնական մտահայեցության ապացույցներ են դառնում։ Ստեղծագործական փոխըմբռնման և համագործակցության այս մթնոլորտին մեծապես նպաստում էր «Արևելք»-«Մասիսի» խումբը գլխավորող Արփիարյանի մարդկային նկարագիրը։ «Իր խելքը իր մեծագույն հրապույրը կկազմեր,— վկայում է Հրանտ Ասատուրը։ ...Ամեն բան հասկցող, ամեն բան միտքը պահող, շուտ տպավորվող, շուտ գրգռվող, արտակարգորեն գործունյա ուղեղ մըն էր։ Կծու քննադատ մըն էր, հանդուգն հարձակող մը, անգութ ճայթող մը, ո՛չ սպառնալիքներե կվախնար, ո՛չ բամբասանքե։ Օրվան աղդեցիկ մարդոց դեմ գրելը հաճույք մը, հոգիի անդիմադրելի պետք մըն էր իրեն համար, բավական է, որ անոնց արարքներուն մեջ անիրավ, քննադատելի բան մը գտներ»[15]։

«Արևելք»-«Մասիսի» միացման շրջանը բնութագրվում է մտավորական ուժերի համընդհանուր ձգտումների իրագործումներով։ Լայնացնելով արևելահայության հետ հետագա մերձեցման ծրագրի սահմանները, հրապարակագիրները ձեռնարկում են ռուսահայ հասարակական-գրական կապերը նրպատակաուղղել նաև ռուս հասարակական մտքի ու դրականության ճանաչողությանը։ «Ռուսական ոգին, ռուսական գրականությունը, օրենքները և

---

13 «Արևելք», 1884, № 139։

14 Նույն տեղում, № 129։

15 Հ. Ասատուր. Հրապարակագրի հուշերեն. տե՛ս ԳԱԹ, Թ. Ադատյանի ֆոնդ, № 139

կառավարական ուղղությունը» հետազոտության խնդիր դարձնելով, «Մասիսի» խմբագրությունն առաջնորդվում էր ամենից առաջ քաղաքական տեսակետներով՝ նպատակ ունենալով հասարակության մեջ արմատավորել ռուսական կողմնորոշման նպաստավոր ըմբռնումները։ Ընդ որում արևմտահայ 80-ականների ու հատկապես Արփիարյանի հայացքներում միանգամայն որոշակիորեն տարանջատվում էին ցարիզմի երկդիմի քաղաքականության և ռուսական առաջավոր մտքի ղերի գնահատումները։ Նկատի ունենալով Ռուսաստանի ներսում սոցիալական հեղաբեկումների սրացումը և դրա հետ առընչելով ճնշվողների աճող, համընդհանուր դժգոհությունը ընդդեմ ցարիզմի ազգային քաղաքականության, Արփիարյանն ուշագրավ հետևություններ է տնում ապագայում սպասվող փոփոխությունների անխուսափելիության մասին։ «Իրավ է, թև դժվար վայրկյաններ կանցունեն այժմ Ռուսիոյ բոլոր փոքր ազգություններն,— դրում է նա,— իրենց վիճակը մխիթարական մը չընծայեր, բայց ե այնպես համբերելու, տոկալու են, ժամանակն իրենց համար կաշխատի։ Այս կացությունն երկար չկրնար տևել։ Ամեն հեռատես անձ կդիտե, թև բարեփոխման ժամանակը կմոտենա։ Կառավարական ձևի մը փոփոխությունը լինի թև ոչ, Ռուսիա կըմբռնե, թև իրեն համար ձախորդությանց թվական մը պիտի բանան այն հարյուրավոր ազգերն, որք վիրավորված իրենց ամենն նվիրական զգացումներուն մեջ, վնասված իրենց նյութական կացության մեջ ատելություն կտածեն ընդդեմ Ռուսիոյ»[16]։

Համոզումների այս ուղղվածությամբ էլ «Մասիսն» անդրադառնում է ռուսական հասարակարգի, եկեղեցական, կրթական խնդիրների լուսաբանությանը։ Կարևոր տեղ է տրվում և գրականությանը։ Արևմտահայ ընթերցողին ներկայացվում են ռուս դասականների՝ Պուշկինի, Լերմոնտովի, Դոստոևսկու, Տուրգենևի ստեղծագործություններն ու դրանք արժեքավորող հանգամանալի հոդվածները։

Արփիարյան հրապարակախոսի ջանքերը թերթի դեմոկրատական բովանդակության ծավալման ուղղությամբ ակներև են հատկապես ժամանակակից կյանքի հրատապ խնդիրների բազմաձև արծարծումներում։ Հասարակական կյանքի, ժողովրդի սոցիալական ծանր կացության պայմանների մասին ճշմարտությունը հրապարակելու պահանջը Արփիարյանը նպատակադրում է «ինքնօգնության» գաղափարի իրագործմանը։ «Ժողովրդի սրտին մոտիկ խոսելու ե կրականության միջոցով ընկերական խնդիրներ հուզելու» գործնական ձգտումներով «Մասիսի» խմբագիրը ձեռնարկում է արևմտահայության մոռացված, բայց հոծ մի դանգվածի՝ պանդուխտների ե դրա հետ կապված գավառի հայության կյանքի պատկերմանը։ Իր այդ ձեռնարկի նշանակությունը բացատրելով, հրապարակախոսը դրել է. «Հարկ էր ժողովուրդը ցընցել, ոնոր իմացնել՝ թև թուրքեն բարեկարգության պահանջված պահուն, մենք ալ մեր ձեռքով գործադրելիք շատ մը բարեկարգություններ կրնայինք ունենալ։ Պետք էր հանրային սիրտը թունդ հանել, հոգիները խռովել ու մեր ներքին վիճակը մեր ձեռքով բարելավելու մտածությունը զորացնել»[17]։

Ազգային միասնական գիտակցության, հակահարուստ շարժման, գավառահայության կյանքի արծարծումները նպատակամիտում են ազգային-քաղաքական կյանքի վերաշինությանը՝ ապահովելով օրաթերթին մինչ այդ աննախընթաց հեղինակություն ու տեսակարար կշիռ։ Հասարակական արատներն ու բացերը մերկացնելու ընդհանուր ջանքերը հանդիպում են ոչ միայն սուլթանական կառավարության, այլև բուրժուական վերնախավի ու պահպանողական իսլամի կատաղի դիմադրությանը։ Մատնությունները, կառավարությանն ուղղվող գաղտնագրերը թերթն անվերջ կանգնեցնում են փակվելու սպառնալիքի առաջ։

---

16 «Մասիս», 1887, № 3870։

17 Արփիար Արփիարյան. Երկեր. Երևան. 1987. էջ 445—446։

1887 թ. հունիսից մինչև 1888 թ. մայիսը Արփիարյանը ստիպված է լինում դադարեցնել աշխատակցությունը «Մասիսում»՝ չցանկանալով հնազանդվել թերթի խմբագրական վարչության կաշկանդող պահանջներին։ Իր հրաժարականի պատճառները նա բացատրում է «Մի քանի խոսք» հոդվածում՝ տարբերակելով հրապարակախոսի իր սկզբունքներն ու համոզումները։ «Իմ համոզումներս շատ բաղադրյալ չէին,— գրում է նա։— Համոզված եմ, թե հայ թերթ մը պետք չէ որ լինի հայ ազգին համար մի տեսակ լուտաս, ափրիկյան անուշահամ այն պտուղն, որո համար նախնիք կըսեին. «Զոր թե ուտե ոք՝ զհայրենիսն մոռանա»։ Այս համոզմամբ Մասիս շաբաթաթերթը կատարելապես ազգային թերթ մը ընելու հետամուտ եղած եմ։ Վեպ, թղթակցություն, խմբագրական, ամեն կարգի հոդված ուրիշ նպատակ չունեցան, բայց եթե Պոլսո, Հայաստանի ռուսական հայոց կյանքի ամեն երևույթներն ուսումնասիրել»[18]։

Թեև մեկ տարի անց թերթի տպագրությունը վերսկսվում է, սակայն երկար չի տևում։ 1890 թ. հոկտեմբերի 15-ին լույս է տեսնում «Մասիսի» վերջին համարը Արփիարյանի խմբագրությամբ։ Այն վերստին սկսում է հրատարակվել 1892 թ. հունվարին արդեն Հրանտ Ասատուրի և Գրիգոր Զոհրապի խմբագրությամբ։ Արփիարյանը, որին «Արևելքի» վարչական խորհուրդը փաստորեն մեկուսացնում է «Մասիսի» խմբագրությունից, ձեռնամուխ է լինում նոր թերթի՝ «Հայրենիքի» հրատարակման պատրաստությանը։

* * *

«Հայրենիք» օրաթերթի հրատարակությանը արևմտահայ հասարակական կյանքում նախորդեց տեղատվության մի շրջան։ 1890 թ. ամռան իրադարձությունները՝ Էրզրումի դեպքերը, Գում-Գաբուլի ցույցը և դրան հաջորդած քաղաքական կատաղի ռեակցիան ցրել և ջլատել էին 80-ականների ուժերը։ Բանտարկվել էր Արփիարյանը, Լևոն Բաշալյանը հեռացել էր Եվրոպա, մյուսները դուրս էին մնացել գրական ասպարեզից։ Անհրաժեշտ էր ուժերի նոր համախմբում, որը կարող էր իրականացվել արմատական գաղափարական ուղղություն ունեցող պարբերականի շուրջ։

1891 թ. հունվարին 75 քաղաքական բանտարկյալների հետ ազատ է արձակվում նաև Արփիարյանը[19] և նոր եռանդով ծավալում իր գործունեությունը։ Սակայն նոր պարբերականի հրատարակությունը խոչընդոտում էին բազմաթիվ արգելքներ, որոնց հաղթահարումը պահանջում էր ոչ միայն դիվանագետի ճկունություն, այլև նյութական ամուր հիմք։ Հանձինս Հովհաննես Շահնազարի, Արփիարյանը գտնում է այն մարդուն, որը թերևս միակն էր, որ կարող էր իրագործել նրա ծրագրերը։ Շահնազարը, որ Պոլսում մեծ հեղինակություն վայելող փաստաբան էր ու հասարակական գործիչ, առանց երկմտելու թողնում է իր ապահով փաստաբանական ասպարեզը և անցնում հրապարակախոսության։

«Հայրենիքի» հրատարակությանը Շահնազարը և Արփիարյանը ձեռնամուխ են լինում գաղափարների ու համոզումների կատարյալ ընդհանրությամբ ու համերաշխությամբ։ Փոխըմբռնման կարևոր ապացույց էր այն, որ Շահնազարը, առանց հանրային կարծիքի առջև վարանելու, իր թերթի ճակատին դնում է Արփիարյանի անունը՝ իբրև խմբագրապետի։

«Հայրենիքի» առաջին համարի հրատարակիչների նպատակներն ու սկզբունքները պարզող առաջնորդողում կարդում ենք. «Հայրենիքի» խմբա-

18 «Մասիս», 1887, № 3873։

19 Արփիարյանին ստիպում են հրապարակել «մեղայական», որով նա պարտավորվում էր հրաժարվել քաղաքական գործունեությունից։ Թեև հրապարակախոսը նշանակություն չի տալիս իր վրա ծանրացող վտանգի սպառնալիքին, սակայն այն ճակատագրական հետք է թողնում ողջ հետագա կյանքում՝ առիթ տալով նրա գաղափարական հակառակորդների անհիմն կասկածներին ու մեղադրանքներին։

պիրներր խղճի համոզում ունին թե՝ հրատարակելով հայերեն այս նոր օրաթերթը պարտականություն մը կատարած պիտի ըլլան... Սակայն այժմեն կրնանք հայտարարել, թե «Հայրենիք» պիտի չըլլա ստրուկն հանրային կարծիքի, և ոչ ալ անգույն, չեզոք թերթ մը..., նա պիտի կրնա մտնել մեր ընկերության ամեն խավերուն մեջ, եթե պիտի ըլլա ապարանքի թերթը, պիտի ըլլա նամանավանդ խրճիթին թերթը. եթե պիտի ըլլա զարգացյալին թերթը, պիտի ըլլա նամանավանդ մտքով հետամնացին թերթը, և իր ազդեցությունը պիտի տարածվի ընկերական ամեն դասերու վրա, հետևաբար այդ ընդարձակ ազդեցության համեմատ ալ ընդարձակ բարոյական պատասխանատվություն կծանրանա խմբագրության վրա։ «Հայրենիքին» հրատարակիչները կրնան փստահորեն հայտարարել, թե պիտի չթերանան իրենց պարտականությունների մեջ»[20]։

«Հայրենիքի» գործունեության շրջանը դառնում է 80-ականների փաղանգի և ամենից առաջ իր՝ Արփիարյանի գաղափարական իրագործումների փայլուն արտահայտություն։ Արփիարյանի ավանդը արևմտահայ հրապարակախոսության նոր փուլում մնում է չգերազանցված հասարակական հզոր անդրադարձի և մարտական ուղղվածության նշանակությամբ։ Հրապարակախոսի դերի խոր ըմբռնմամբ Արշակ Չոպանյանը գրել է. «Անկարելի է մոռանալ, որ առանց Արփիարյանի պիտի չհիմնվեր «Հայրենիքը», և որ «Հայրենիքը» թրքահայոց հանրային ու մտավոր կյանքին մեջ՝ ամենակարևոր երևույթ մըն էր»[21]։

«Հայրենիքի» մշտական աշխատակիցներն են դառնում Գրիգոր Զոհրապը, Լևոն Բաշալյանը, Տիգրան Կամսարականը և նրանց կողքին նոր անուններ՝ Արշակ Չոպանյան, Երվանդ Օտյան, Վահան Մալեզյան, Տիրան Քելեկյան և ուրիշներ։ Հետագայում «Հայրենիքին» իրենց աշխատակցությունն են բերում նաև Թլկատինցին, Ռուբեն Զարդարյանը, Լևոն Շանթը, Արտաշես Հարությունյանը։ Ուշագրավ է, որ թերթի էջերում հրապարակվում են արևմտահայ կին գրողներն ու հասարակական գործիչները՝ Սիպիլ, Մարի Սըվաճյան, Դայանե Մատակյան։ «Այսչափ հին և նոր տաղանդներու բոլորումը «Հայրենիքի» շուրջը այս թերթին տված էին ժողովրդականություն մը, որուն ոչ մեկ թերթ արժանացած է մեր մեջ»[22],— իր հուշերում գրում է Երվանդ Օտյանը։ Դրաքննչական աճող սպառնալիքի տակ Արփիարյանը հետևողական աննահանջ ուղղությամբ է վարում թերթը՝ փորձելով շրջահայաց դգուշությամբ խուսափել փակումից։ Չնայած դրան թերթը հրատարակության առաջին իսկ տարին փակվում է երկու անգամ։ Շահնազարի ջանքերով թերթը հաջողվում է վերահրատարակել, սակայն արդեն չնշելով Արփիարյան-խմբագրապետի անունը։

Սուլթանական կանխարգել գրաքննության սեղմվող օղակը համարյա անհնարին էր դարձնում ազգային-հայրենասիրական գաղափարախոսության որևէ դրսևորում։ Սակայն ժողովրդի համախմբման և ազգային ինքնագիտակցության զարգացման հիմնավոր խնդիրները շարունակում էին առաջնային մնալ 80-ականների գաղափարաբանության ընթացքում։ «Հայրենիքի» հրապարակախոսությունն իր շեշտված դեմոկրատական ուղղվածությամբ կարողանում է ազգային-քաղաքական խնդիրները վերահմաստավորել լուսավորության, մշակույթի, դրականության, սոցիալական բացահայտումների ընդգրկման տարածքում՝ իր վերջնական արդյունքով դրանք նպատակաուղ-

20 «Հայրենիք», 1891, № 1։

21 «Անահիտ», 1908, № 1—4, էջ 44։

22 Երվանդ Օտյան. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1962, էջ 23։ Ժամանակի հանրային կյանքում «Հայրենիքի» նշանակության մասին է գրում նաև Վահան Մալեզյանը. «...այդ շարժումին ղեկավար սահմանեցան էր Հ. Շահնազարի և Լ. Բաշալյանի հետ Արփիար Արփիարյան իր ուղեկցությամբ դիր բռնած «Հայրենիքի» խմբագրատան մեջ, որ ժամադրավայրը դարձաւ էր մեր առաջին հեղափոխականներուն և օրվան ամենեն սիրված դրողներուն» (տե՛ս Վ. Մալեզյան. Անցած օրեր. Փարիզ, 1927, էջ 34)։

ղելով ազգային առաջընթացի հեռանկարներին։ Գործնական շարժման մեջ են գրվում համազգային գիտակցության ամրապնդմանը նպաստող զաղափարագեղագիտական ազդակները՝ հոգևոր շփման, ազգի երկու հատվածների մշակութային աղերսների, միասնական զարգացման օրինաչափությունների արժեքավորմամբ։

Արփիարյանի խմբագրականների առանցքային դրույթներում սահմանվում են հանրորեն օգտակար, ժողովրդի շահերին ծառայող օրագրության սկզբունքները։ Հասարակական կյանքի հետազոտության պահանջի թելադրանքով թերթն իր ուշադրության կենտրոնում է պահում արևմտահայ կրթական օջախների, բարեգործական հաստատությունների, ազգային վարչությունների գործերի քննությունը։

Ազգային-ազատագրական պայքարի նոր վերելքը 1894—96 թթ. գլխավին կուսակցական շարժման մեջ է ներառնում Արփիարյան հրապարակախոսին։ Վերջնականապես հարելով հնչակյան կուսակցությանը, Արփիարյանը նրանց քաղաքական ծրագրերում առանձնապես կարևոր է դիտում «ժողովրդի մեջ, ժողովրդի հետ և ժողովրդի համար»[3] պայքարի բանաձևը։ Միանալով հնչակյաններին, նա ձգտում է իրագործել ազատագրության վաղուց փայփայված գաղափարը։ Հնչակյաններն իրենց հերթին մեծ հույսեր էին կապում նշանավոր հրապարակախոսի հետ՝ նկատի ունենալով նրա հեղինակությունը ժողովրդի լայն զանգվածներում։ Սակայն «Հայրենիքին» վիճակված չէր շարունակելու ազգանվեր իր ծառայությունը։ 1895 թ. դեկտեմբերի 25-ին կազմակերպվում է առաջին մահափորձը Արփիարյանի դեմ։ Հաջորդ օրը Շահնազարը «Հայրենիքի» էջերում հրապարակում է հոդված, ուր դատապարտում է մահափորձը կազմակերպողներին։ Հոդվածը մեծ հուզում է առաջ բերում, միաժամանակ առիթ դառնում «Հայրենիքի» հերթական խափանման համար[24]։

«Հայրենիքը» արդեն ընդմիշտ դադարում է թերթի տնօրեն Հովհաննես Շահնազարի ձերբակալությունից հետո, 1896 թ. հուլիսի 11-ից։

«Հայրենիքի» խափանումից սկսվում են Արփիարյանի վտարանդի տարագրության տարիները։ Մտավորականներից շատերի նման (Լ. Բաշալյան, Ա. Զոպանյան, Եր. Օտյան և ուրիշներ), ստիպված լինելով հեռանալ Պոլսից, նա միառժամանակ ծրագրում է մնալ Վենետիկում, զբաղվել գրականությամբ՝ հուսալով կրկին վերադառնալ Պոլիս։ Սակայն կուսակցական գործերը նրան տանում են Լոնդոն։

Արհամարհելով անձնական ամեն ցավ ու դառնություն, գրկանքների, հոգեմաշ աշխատության, բայց և անմնացորդ նվիրումի զոհողությամբ հրապարակախոս-գործիչը ծավալում է ազգօգուտ մի գործունեություն։ Հայտնվելով Լոնդոնում ազգային իրադրության խառնակ ու տագնապալի օրերին, միայնակ, կտրված հայրենիքից ու համախոհ ընկերներից, նյութական անմխիթար վիճակում, նա համառ հետևողականությամբ ձեռնամուխ է լինում գաղափարական նոր ձեռնարկումների իրականացմանը։ Հոդվածներ է հրապարակում «Հնչակ», «Գաղափար» թերթերում, ապա, Բաշալյանի Լոնդոն հասնելուց հետո, համատեղ հիմնում և խմբագրում են «Մարտ» և «Նոր կյանք» պարբերականները[25]։

---

23 Տե՛ս Հիսունամյակ Ս. Դ. Հնչակյան կուսակցության. Փրովիդենս, 1938, էջ 41։

24 Հոդվածը խափանարիթ էր ոչ միայն այն պատճառով, որ խոսքը վերաբերում էր կառավարության կողմից «անհուսալի» դիտվող Արփիարյանին, այլև օսմանյան դրաքննության ահող արգելքների հետևանքով։ Ինչպես նշում է Ա. Խառատյանը, «սուլթանը հատուկ հրաման էր տվել դրաքննիչներին՝ մամուլում ընդհանրապես արգելել ապանությունների, մահափորձերի վերաբերյալ ամեն մի լուրի տպագրությունը։ Համիդը դրանց մեջ աներկմիտ ակնարկ էր տեսնում իր անձի մասին, որքան էլ «նեղթեթ լիներ ենթադրյալ անալոգը» (տե՛ս Օսմանյան դրաքննությունը և արևմտահայ մամուլը. Երևան, 1984, էջ 58—59)։

25 «Մարտ» թերթը հրատարակվել է 1897-ին, իսկ «Նոր կյանք» կիսամյա հանդեսը՝ 1898-ին։

Հրապարակախոս-գործչի ծրագրերում ազգային-ազատագրական շարժման ընթացքի կարևոր գործոնը, խթանիչ ուժը մնում է ժողովրդի ինքնապաշտպանության գաղափարը։ Հայության դարավոր մաքառումների պատմությունը նրան բերում է այն եզրահանգման, որ «Հայը արյունին հետ կը-ժառանգե մարտիրոսացման զգացումը... Այդ ժառանգական զգացումն է, որ մեր ցեղը կշլայանդե... Դաղափարի մը համար արյուն տալ մեզի ցեղային ունակություն եղած է։ Մեր զորությունը այդ ունակության մեջ է, վասնզի հինցած ունակությունը բնավորության մաս կկազմե»։

Քննության ենթարկելով Եվրոպական տերությունների միջամտության դիմելու փորձերը, Արփիարյանը գալիս է այն եզրակացության, որ դրանք հղի են եղել տխուր հետևանքներով։ Անհեռատես քաղաքագետների նկրտումները ոչ միայն չեն նպաստել խնդիրների լուծմանը, այլև սաստկացրել են բռնություններն ու արյունահեղությունը, որովհետև նկատի չեն առնվել քաղաքական կացության հակասություններն ու տարամերժ շահերը։ Ուշագրավ է, որ իր տեսակետը Արփիարյանը հիմնավորում է ոչ միայն հայկական խնդրի, այլև ուրիշ փոքր ժողովուրդների պատմական ճակատագրի օրինակներով։ Այրանիայի, Մակեդոնիայի, Կրետեի քաղաքական կյանքում Եվրոպական միջամտությունները հետապնդել են զուտ քաղաքագիտական նպատակներ։ Տարիներ անց կրկին անդրադառնալով հարցին «Շիրակի» էջերում, նա գրել է. «Եվրոպան Կրետեն ի սեր Կրետացիին չազատեց, այլ ի սեր իրեն. այսինքն ի սեր Եվրոպայի շահերուն։ Սուտայի հրաշալի նավահանգիստը ունեցող մեկ կողին պիտի սպասե, թե Եվրոպան ինքը որ պետության պիտի պարդևե ի վայելումն։ Եվ ապա շարունակում է՝ մասնավորելով իր խոսքը Արևմտյան Հայաստանի կացության մասին. «Դեպի Պարսկային ծոցն, Միջերկրականը, Պոլիսը պողոտա երկնցող Հայաստանն ու Կիլիկիան մի՞թե Սուտայի ծոցեն նվազ կշահագրգռին Եվրոպան և մասնավորապես Անգլիան ու Ռուսիան։ Այս հսկայաղոր պետություններն մեր կա՞մքը պիտի հարցնեն, մենե՞ խելք պիտի տրվին Ասիո ու Եվրոպայի աշխարհագրական քարտեզները ի նպաստ իրենց սրբագրելու ատենս»[27].

Հրապարակախոսի գրոսա հայացքից չի վրիպում ոչ միայն իմպերիալիստական քաղաքականության շահադիտական իմաստը, այլև այն անվայել, նվաստացուցիչ ցավակցության ցույցերը, որով նրանք բողարկում էին իրենց անտարբերությունն ու դավթողական ակնկալությունները։ «Ներ հայ ժողովուրդը պաշտպանելու իսկրեր կդառնան Եվրոպայի մեջ,— գրում է նա,— չե՞ներ գիտեր թե մեզի նկատմամբ արտահայտված հոգածությունը քիչ շատ կնմանի—ավելի շատ, քան քիչ,—այն կարեկցության, զոր կենդանիներու համար ցույց կուտան անասնապաշտպան ընկերությունները. սա տարբերությամբ միայն, որ մենք նվազ բախտավոր ենք»[28]։

Հանդես գալով իր տառապած ժողովրդի անունից, հրապարակախոսը բազմիցս ընդգծում է այն միտքը, որ հայությունը քաղաքակիրթ աշխարհից գութ և խղճահարություն չի հայցում, այլ իր արժանապատիվ գոյության պայքարում սպասում է այն աջակցությանը, որ պետք է ընդմիշտ հաստատի նրա իրավունքները։ «Արդար պահանջումի խրոխտ ձայնն է, որ կհնչվի,— գրում է նա։— Հայ ազգը շնորհ մը չէ, որ կխնդրե, իրավունք մը կուզե... Հայկական խնդիրը ծաղելով 1870-ին, ահա 30 տարի է օրե օր կհառաջանա՝ հակառակ ամեն ընդդիմադիր խոչընդոտի»[29]։

Դատապարտելով տեռորիզմն ու արկածախնդրական անշրջահայացությունը, Արփիարյանը դրանց հակադրում է գիտակցված անձնազոհության հերոսական դրվագները, որոնցով հատկանշվում է ազատագրական շարժ-

---

26 «Նոր կյանք», 1898, № 17, էջ 266։
27 «Շիրակ», 1906, № 2, էջ 105—106։
28 «Նոր կյանք», 1898, № 6, էջ 90։
29 «Նոր կյանք», 1900, № 11, էջ 162։

ման սխրալի տարեգրությունը։ Զեյթունի, Սասունի հերոսամարտերը իմաստավորվում են իբրև պատմության մի նոր դաս։ Մեկնաբանելով Զեյթունի ինքնապաշտպանական պայքարի նշանակությունը, հրապարակախոսն այնքննում է իտալական ազատագրական շարժման պատմական զուգահեռներում։ Նա հատկանշական է համարում այն փաստը, որ Գարիբալդիի հին դինվորներից մեկը՝ Հալեպի հյուպատոս Վիթոն, ականատես լինելով Զեյթունի դեպքերին, սքանչացմամբ գրել է. «Կ՚ողջունեմ քեզի, 'դյուցազնաքաղաքդ Զեյթուն»։ Արփիարյանն անդրադառնում է հայերի մաքառումը ներկայացնող Վիթոյի երկհատոր գրքին, ցույց տալիս, որ նման հրատարակությունները[30] գալիս են հաստատելու, «թե Հայերու ջարդը հակամարդկային եղեռնագործություն չէ միայն, այլ նաև ոճիր մը քաղաքակրթության ընդհանուր տարածումին դեմ...»։

Լինելով ականատես ու մասնակից XIX դարի հայ քաղաքական կյանքի վերջին տասնամյակների իրադարձություններին, Արփիարյանը ձգտում է անցյալի փորձի ընդհանրացմամբ ճշտել ազատագրական պայքարի հետագա ուղղությունը՝ խուսափելով նախորդ փուլի սխալներից։ Քննադատական հայացքով պատմականորեն իմաստավորելով եղելությունները, նա զգաստության է հրավիրում, անհրաժեշտ դիտում ծրագրերի խոր և ընդարձակ պատրաստությունը։ «Ազգային քաղաքացիական առաքինություններու հիշատակը միշտ կենդանի պահենք ու սիրենք, հուսատու ոգին է ան մեր տրխրություններուն վրա սավառնած։ Բայց պիտի չի մոռանանք նաև, թե ժողովրդին էն վատ թշնամիներուն մեջ է անոր նկարագրին հոռությունները շոյել սիրողը, կամ չտեսնելու զարնել հակամիտողը, ցեղ մը կշլապնդի, կզորանա իր կյանքին ամենախիստ քննադատությամբը»[31]։

Հրապարակախոսի հղացումները որոշակի ձեռնարկներ են դառնում հանդեսի էջերում։ Նա սկսում է հրատարակել իր «Ժամանակակից պատմության էջեր» ուսումնասիրությունը[32], ուր քննվում և իմաստավորվում են արևմտահայ իրականության այն օբյեկտիվ նախադրյալներն ու գործոնները, որոնց շարժման արդյունքում ձևավորվել և հասունացել էր հայ ազատագրական գաղափարաբանությունը։ Ուսումնասիրությունն ունի «Կ. Պոլսո պահպանողական վարչությունները» ենթավերնագիրը, որը բավականաչափ պարզում է հեղինակի ուրույն մտահղացման բովանդակությունը՝ ցույց տալ ժողովրդի և ազգային վարչությունների քաղաքական կողմնորոշման ակնհայտ հակասությունները։ Դրանով նա նպատակամիտում էր ազգային մտածողության վերանորոգման՝ անցյալի գիտակցական գնահատման ճանապարհով։ Առաջնորդվելով այն համոզմամբ, որ «հայ ազգին համար ինքնաքննության պարտականությունն անխուսափելի է», հրապարակախոսը պարտադիր է դիտում պատմական մոտեցումը, քանի որ «պահպանողականություն և հեղափոխականություն միևնույն ազգային կյանքի մը երևույթներն են. ո՛չ մին կրնանք արհամարհել, ո՛չ մյուսը առանց մեծապես տուժելու»[33]։ Արփիարյանի հետ միասին հանդեսի ծրագրային կանխագծումներին են ծառայում Բաշալյանի, Զոպանյանի, Օտյանի բազմաթիվ ուսումնասիրությունները, հոդվածներն ու գեղարվեստական էջերը։ Դրանցից հիշատակենք Օտյանի «Արյունոտ հիշատակներ», «Հեղափոխության մակաբույծներ», Արփիարյանի «Հայաստան և Կ. Պոլիս», «Հրոսակի մը հիշատակներեն», «Օրվան կյանքը» շարունակվող քրոնիկները և այլն։

---

30 Տե՛ս Ազատասիրական գաղափարները հայ հրապարակախոսության մեջ. տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Ջաքարյան և Գ. Հովհաննիսյան. Երևան, 1982, էջ. 529—530։

31 «Նոր կյանք», 1898, № 1, էջ 1։

32 Տե՛ս «Նոր կյանք», 1898, №№ 1, 3, 5, 7, 9, 11—13։

33 «Նոր կյանք», 1898, № 1, էջ 3։

* * *

Հնչակյանների միջև խորացող անհամաձայնությունը ի վերջո հանգեցնում է պառակտման[41]։ 1901-ին Արփիարյանը ստիպված է լինում թողնել կուսակցական գործունեությունը և հեռանալ Փարիզ։ Այստեղ, չնայած բարոյական և նյութական ծանր կացությանը, Արփիարյանը մի զարմանալի համառությամբ կրկին փորձում է հիմնել մի նոր պարբերական՝ «Հայ հանդես» անունով։ Ձեռնարկը չի հաջողվում։ Արփիարյանը մեկնում է Փարիզից Վենետիկ և այստեղ միայն, Սիմոն և Երվանդ Նահապետյանների օժանդակության շնորհիվ, լույս է ընծայում «Հայ հանդեսի» առաջին համարը։ Հանդեսը հրատարակվում է ընդամենը 2 տարի՝ 1902—1903 թթ.։ Նրա էջերում լույս են տեսնում Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակը, հրապարակախոսական, գրականագիտական հոդվածներ։ Նույն տարիներին նա աշխատակցում է «Դեղուին» հանդեսին՝ «Հրպետ» ծածկանունով, շարունակում թղթակցել «Մշակին»։ Հրապարակախոսը նույն կրքոտությամբ ու հետևողականությամբ շարունակում էր «Հայ հանդեսում» քննել ու բացահայտել հայ ազգայնական կուսակցությունների ընթացքի սխալները։ Նրա դեմ է ելնում հակառակորդ խմբի թշնամանքի նոր ալիքը և 1903 թ. փետրվարի 15-ին կատարվում է երկրորդ մահափորձը։ Դրողի համախոհ ընկերները՝ հատկապես Օտյանն ու Մալեղյանը, տագնապած նրա վիճակի համար, բազմիցս առաջարկում են մեկնել Եգիպտոս։ «Հայ հանդեսի» դադարելուց հետո, այլևս անհարին և անիմաստ դիտելով Վենետիկում մնալը, Արփիարյանը մեկնում է Եգիպտոս։

Դարասկզբին եղիպահայ գաղութն ապրում էր աշխույժ ու գործուն հասարակական-մշակութային կյանքով։ Այստեղ էին հաստատվել Պոլսից հեռացած մտավորականներ Միքայել Կյուրճյանը, Վահան Թեքեյանը, Երվանդ Օտյանը հրատարակում էին «Ազատ բեմ» թերթը, «Շիրակ» հանդեսը, Կահիրեում սկսել էր լույս տեսնել «Լուսաբեր» թերթը, որտեղ էին հայկական դպրոցները։ Արփիարյանը, որ դեռևս Վենետիկի աշխատակցում էր այս պարբերականներին, Կահիրեում ստանձնում է «Լուսաբերի» խմբագրությունը, նույն ժամանակ էլ շարունակում Թեքեյանի և Կյուրճյանի հետ «Շիրակ» հանդեսի հրատարակությունը։ Զրկանքներով լի տարիների աստանդական կյանքից հետո նա վերջապես գտնում է հոգեկան խաղաղություն և նոր եռանդով մտնում հրապարակախոսական ասպարեզ։

Հրապարակախոսի գործունեության ելակետը և չափանիշը մնում է նույնը՝ առավելագույնս նպաստել ազգային առաջընթացին, արթուն պահել ժողովրդի քաղաքական ինքնագիտակցությունը՝ հաշվի առնելով պատմական դեպքերի հետևանքները ու առաջացած նոր առանձնահատկությունները։ «Լուսաբերում» և «Շիրակում» հրապարակվող նրա առաջնորդողները ու մյուս հոդվածները ստուգության են ենթարկում և ճշտում ազգային ժամանակակից կյանքի խնդիրները, պայքարի նոր եղանակները։

Քաղաքական նոր իրադարձություններում առաջնահերթ է դիտվում Ռուսաստանի հանդեպ հայ հասարակական մտքի կողմնորոշման հարցը։ Խնդրի առանձնահատկությունը հրապարակախոսի կողմից ընդգծվում է «Հայաստան և Ռուսիա», «Կովկասեն», «Ամուճան» և մի շարք այլ հոդվածներում ու պատմական ակնարկներում։ Արփիարյանը համոզված էր, որ ժամանակի հեղափոխական իրադրության պայմաններում «Թյուրքիո հպատակ

---

41 Հակասությունները հնչակյանների տարբեր խմբավորումների միջև ակա լին դեռևս կուսակցության ձևավորման առաջին տարիներից։ Փորձելով սոցիալիստական դաղափարները հարմարեցնել ազգային-ազատագրական շարժման ծրագրերին, հնչակյանները փաստորեն անտեսում էին Արևմտյան Հայաստանի սոցիալ-քաղաքական իրադրության առանձնահատկությունները։ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 6, Երևան, 1981, էջ 189—191։

Հայաստանի ապագան Ռուսիոն կյանքեն կախում ունի։ Համեմատելով Ռուսաստանի քաղաքական դիրքորոշումը «եվրոպական մահաքուն անտարբերության» հետ, նա պատմական փաստերի անհերքելի իրողությամբ ցույց է տալիս, որ «Հայոց համար հոգածությանը... Ռուսիոն, միայն և միայն Ռուսիոն կպարտինք»[35]։

Ռուսաստանում տիրող հեղափոխական իրադրությունը Արփիարյանի կողմից ընկալվում է իր լայն համամարդկային նշանակությամբ։ «Պայթած հեղափոխությունը,— գրում է նա «Սարսումը» հոդվածում,— միահեծան իշխանություն մը չէ, որ պիտի տապալի, այլ նաև տնտեսական դրություն մը, ուստի և տարակույս չկա թե իր հաղթանակն օր մը չէ օր մը պիտի սարսե ոչ միայն թագավորությունները, այլև հանրապետություններն ալ»[36]։ Անգամ հեղափոխության պարտությունը չի հուսահատեցնում հրապարակախոսին, այլ դիտվում է իբրև ժամանակավոր տեղատվություն բռնակալ ուժի առաջ, երբ տեղի է ունենում պայքարի դասերի ճիշտ գնահատում և ուժերի համախմբում հասունացող նոր մարտերից առաջ։ «Թող չը կարծվի, թե ռուսական շարժումը ջախջախվեցավ, լմնցավ։ Ահեղ պատերազմ մըն է, որ կմղվի միահեծանության ու ժողովրդական իրավունքի միջև։ Հեղափոխությունը կրնա քանի մը ճակատամարտ կորսնցնել, բայց վերջնական հաղթանակը իրեն պիտի մնա երկարատև կռվե մը հետո»[37],— համոզված գրում է նա։

Հեղափոխության ազատասիրական ոգին համահնչուն էր Արփիարյանի դավանանքին։ Հասարակական մտքի համընդհանուր քաղաքական հասունացումը դիտվում է կարևոր ազդակ հայ ժողովրդի քաղաքական անկախության պայքարի նոր վերելքի համար։ Անցյալ դասերի համակողմանի քննությունը նրան բերում է մի եզրահանգման. «Փորձառությունը գրքի մեջ չեն սորվիր. ինչպես մարդ մը, նույնպես ժողովուրդ մըն ալ իյնալով ելլալով փորձառու կըլլա։ Երեսուն տարվան մեջ ըստ բավականին փորձառություն ունեցանք, որմեն գործնականապես օգտվելու ժամանակն է հիմակ...»[38]։

Միանալով արտասահմանում համաժողով հրավիրելու առաջարկին, Արփիարյանը ձգտում է վերջնական արդյունքի հասցնել կուսակցությունների միջև համաձայնության գալու բանակցությունները, այդ գործում կարևոր տեղ տալով մամուլին։ Ազգի ուժերը կենտրոնացնելու ջանքերը մշտապես մնում են հրապարակախոսի ուշադրության առարկան։ Սակայն միավորման ուղիներում նա չի ընդունում գաղափարական զիջումներ, հաշտվողական դիրքորոշում։ Նրա քննադատական հայացքը շարունակում է նշանակետ ունենալ և՛ «չեզոքների» զգուշավոր քաղաքականությունը, և՛ «հայ անիշխանականության» անխոհեմ ընթացքը։ Արփիարյանի համար հայ ազատագրության հեղափոխական պայքարը եղել և մնում էր վեհ մի երևույթ, որին նա նվիրեց իր ողջ կյանքը։ Դեռևս լոնդոնյան տարիներին, բնութագրելով ազատության դինվորագրյալների հայրենանվեր գործը, նա գրել է. «Նյութական պետքը չէր, որ հայ երիտասարդությունը Հեղափոխության կմղեր. անարատ հայրենասիրության զգացումներով խանդավառված էր այդ երիտասարդությունը. աներկրավոր էին իր բաղձանքները, ուստի և գերաբանցորեն ազնիվ»[39]։ Հետագայում ևս հրապարակագիրը մնում էր այն համոզման, որ հեղափոխությունը ծնունդ առավ ոչ թե անհատների կամքով, այլ «տառապանքին մեծությունը շղթայազերծեց ըմբոստացումը միահամուռ հայ աշխարհին զանազան կետերուն վրա, զայն ուղղելով դեպի այն անձկալի նպատակը»[40]։

---

35 «Շիրակ», 1906, № 3, էջ 169։
36 «Լուսաբեր», 1905, № 147։
37 «Լուսաբեր», 1906, № 171։
38 «Շիրակ», 1907, № 9, էջ 509։
39 «Նոր կյանք», 1900, № 22, էջ 339։
40 «Շիրակ», 1905, № 9, էջ 170։

Հրապարակախոս-գործչի հայեցությանը խորթ էին նեղ ազգայնամոլական տեսակետները։ Ազատագրական պայքարի վերջնական արդյունքում նա երազում էր իրագործված տեսնել բոլոր ընչվածների բաղձանքները։ 1905 թ. հեղափոխությունը նրան համամարդկային ազատության հույսեր է ներշնչում. «Ինչ թե,— գրում է նա,— Կովկասի այլևայլ ցեղերուն ալ համերաշխությունը Թուրքիո այլևայլ ցեղերուն ալ աչքերը բանար։ Ու հաջորդ տասնամյակի մը բոլորմանը փոխան կոտորածներու մահաստանի մը մեջ թափման, ծաղկաղարդ դարաստաններու մեջ հրավեին Եփրատի ու Տիգրիսի Հայը, Քուրտը, Թուրքը, Եզիտին, քրիստոնեականն ու մահմեդականը, հավատացյալն ու անհավատը՝ Ազատության Արևը Աստծու Արևուն պես ամենուն վրա ցաթած»[41]։ Թեև հեռվից-հեռու, հրապարակախոսը տեղյակ էր մարքսիստական գաղափարների, ուստ բոլշևիկների գործունեության էությանը։ Կովկասի, Եվրոպական մամուլի նյութերից պատկերացում կազմելով ռուսական հեղափոխության ընթացքի մասին, նա հանգում է այն եզրակացության, որ վերջինիս պատմական դասերը ուսանելի խորհուրդ ունեն, որը «մեզի շատ մը բաներ ալ պիտի սորվեցնեն, որոնցմե կրնանք օգտվիլ մեր հեղափոխական գործին դեկավարության մեջ։ «Դաս մը Ռուսիո հեղափոխականներեն» խոսուն վերնագիրը կրող հոդվածում հրապարակախոսն առաջնահերթ խնդիր դիտելով հեղափոխության բուն բովանդակությունն ու նրան դիմադիր ուակցիոն ուժերի ճանաչումը, այդ անհրաժեշտությունը բացատրում է իրողության բոլորակված ադդակները ճիշտ ըմբռնելու պահանջով։

Արփիարյանը չի անտեսում նաև պայքարի ազգային առանձնահատկության բնույթը, որն անպայման յուրատեսակ մոտեցում էր պահանջում։ «Այլ բնդունելու է,— նշում է նա,— որ Կովկաս նաև ցեղային խնդիրն ալ կրարդվի ընկերային խնդրին վրա։ Համակոդմանի քննության ենթարկելով բաղաքական պայքարի ձևնարկները, նա այդ իմաստով էլ չի ընդունում հնչակյանների ծրագիրը, քանի որ այն «պատրաստված էր ժնև, Ռուսիան ճանչնալով, Թուրքիո համար շինված և անգործադրելի»։ Նույնքան էլ չհիմնավորված են դիտվում երիտթուրքերի հետ հնչակյանների գործակցելու հրապարակումները։ «Երիտասարդ Թուրքերուն այսինչ սուլթանին տեղ այն ինչ սուլթանը բերելու բդձանքը բնավ երկրին վերանորոգման բդձանքը չէ,— իր համոզմունքն է հայտնում հրապարակախոսը՝ զուգահեռելով Ռուսաստանի օրինակով։— Ռուսները ի՞նչ պիտի կրնային շահիլ, Նիքոլային տեղ պարզապես Միխայել մը թագավորեցնելով»[42]։ Մի այլ հոդվածում նա ոչ միայն հույսեր չի կապում երիտթուրքերի իշխանության ձևոք բերելու հետ, այլև հեռատեսորեն կանխագուշակելով հայերի դրության վատթարացումը, ստիպում է խորհել ապագա ընթացքի մասին։ «Այսօր ամենուն դիացած բանն է, որ մենք Հայերս շատ ավելի մեծկակ երկյուղներ ունենալու ենք Երիտասարդ Թուրքերեն, քան թե Հին Թուրքերեն։ Եվրոպայի մեջ իսկ մեր փոխադարձ հարաբերությունները ցույց կուտան, թե օր մը երկիրը իրարու հետ ինչպես պիտի վարվինք, երբ անոնք երկրին գերագույն վարիչները դառնան և մենք ալ շարունակենք բայա մնալ»[43]։ Ընդամենը երկու տարի անց՝ 1908-ին, Արփիարյանի կանխատեսումները ամենադաժան իրականություն դարձան երիտթուրքերի մշակած՝ հայության ոչնչացման ծրագրում։ Իսկ մինչ այդ հրապարակախոսի շուրջը շարունակում էր բարձրանալ անհանդուրժողականության, ծանր հալածանքների ալիքը՝ անխուսափելի հաշվեհարդարի սպառնալիքով։ Արփիարյանի հարձակումները կուսակցական նեղմտության, արկածախնդրական ձևնարկների ախուր հետևանքների դեմ հանդիպում են անըմբռնողության խուլ պատնեշին։ «Արփիարի մղած պայքարը,— գրում է Երվանդ Օտյանը իր հուշերում,— հրապարակային քննադատություն մըն էր խմբակի մը

41 Նույն տեղում, № 5, էջ 372։

42 «Լուսաբեր», 1906, № 171։

43 Նույն տեղում, № 176։

դեմ, որուն արարքները զզվանք և զայրույթ հառաջ բերած էին բովանդակ հայության մեջ և ինչ որ ինք քաջարար կգրեր՝ ուրիշներ արդեն երկար ատենե ի վեր կկրկնեին իրարու»[44]։

Քաղաքացիական կայուն նկարագրի, հանրության առջև պարտականության գաղափարի սկզբունքներով էր առաջնորդվում հրապարակագիրը՝ անարգանքի սյունին գամելով հեղափոխության գործը վարկաբեկող խմբակցությունների արարքները։ «Հայ լինչականները», «Քավության կանթեղը» հոդվածներում ասես կտնխաբգալով անխուսափելի օրհասի ժամը, որը նրա անունը պիտի ավելացներ անմեղ զոհերի շարքում, Արփիարյանը հանրությանը մղում է խորհրդածելու և կանխելու շարունակվող ոճիրները։

Ինչպես նշում է Վահան Մալեզյանը, Արփիարը կանգնած էր լրագույն երկրնտրանքի առջև. «Լռե՞լ թե գրել, քանզի լավ գիտեր, թե իր գրիչը պիտի փութացներ իր մահը։ Ու անկարելի էր հարգանքով ու խանդաղատանքով չի վերցնել իր արյունալից գործը... երեսունհինգ տարիների անդադրում ու անվհատ աշխատանք մը, իր աչքին համար՝ որուն սիրույն նախամեծար սեպեց մեռնիլ, քան թե լռել»[45]։

Արփիարյանը լռեց, և 1908 թ. փետրվարի 12-ին կատարվեց նրա գեմ հրլորը՝ սարսափելի մահափորձը։ Իր ողջ անանձնական կյանքը որկանքներով ապրած գրողը, որի «սպանված պահուն քովեն հացի կտոր մը, քանի մը լրագիր և 6—7 ղրուշ գտնված էր միայն», իր գնահատանքը ստանում է հանրությունն միահամուռ սիրո ու մեծ արտահայտությամբ[46]։ Ավարտվում է եղերորեն գեղեցիկ մի կյանքի պատմություն, որի արդյունքը նվիրագործվեց ազնիվ մաքառման ու ձեռքբերումների անհերքելի արժեքով։

Հանրագումարի բերելով հրապարակախոսի գործունեությունը ժամանակի հեռավորությունից, գժվար չէ նկատել վրիպումներ կամ միակողմանի տեսակետներ, որոնցից ղերծ չի մնացել նրա հայեցությունը։ Հակասական իրողությունների բարդ մթնոլորտում կաղապարված ըմբռնումների հաղթահարման ուղիներում թերևս անխուսափելի էին այդ դրսևորումները, սակայն առավել բնութագրականը մարտնչող հրապարակախոսի, արվեստագետ մըտածողի աննահանջ սկզբունքայնությունն ու ամբողջական նկարագիրն էր, մտքի տնկախության, խիզախ հայրենասիրության հաստատուն ընթացքով։

АРПИАР АРПИАРЯН—ПУБЛИЦИСТ

Л. Г. МУРАДЯН

Резюме

В истории армянской общественно-политической мысли особое место занимает деятельность известного западно-армянского писателя, критика и публициста Арпиара Арпиаряна (1851—1908). На протяжении 30 лет, с 1877 до 1908 года, он возглавлял, редактировал основанные им газеты «Аревелк», «Айренік», журналы «Масис», «Нор кянк», «Ширак» и другие. Трудно переоценить заслуги писателя-публициста, неустанного поборника сближения западной и восточной Армении. Его статьи проникнуты идеями патриотизма, национального единства. Публицистику Арпиара Арпиаряна отличает последовательная русская ориентация, связанная с осуществлением национально-освободительной программы.

---

44 Ե. Օտյան. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 394։

45 Վ. Մալեզյան. Ճամբուս ծայրը. Պատմական ակնարկներ ու դեպքեր. Փարիզ, 1954, էջ 279—280։

46 Ինչպես վկայում է Արփիարյանի գործի ուսումնասիրող Գ. Սահակյանը, հրապարակվում էին հոդվածներ ոչ միայն հեռատես, այլև արարական, իտալական, ֆրանսիական, ռուսական և այլ թերթերում։ Տե՛ս Գ. Ատանյան. Արփիար Արփիարյան. Երևան, 1955, էջ 283։